ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 3 *Общественные науки*

Հ. Ռոյանյան

ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ԵՐԿԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՒՄ

Դեռևս XX դարի սկզբներում, երբ նոր նոր ձևավորվում էր լենինիզմը, պատանի Ստալինը հանդես է բերում հենց այդ ժամանակ գրած իր ամենավաղ երկերում դիալեկտիկական մեթոդի, դիալեկտիկական տրամաբանության մեծ վարպետություն։ Կյանքը, բնական և հասարակական-քաղաքական, իրական պրոցեսները նա դիտում է զարմանալի խորաթափանցությամբ, իր բազմազանության, հարստության, բարդության մեջ։ Դիալեկտիկան ընկեր Ստալինի (ինչպես և Մարքսի, Էնգելսի, Լենինի) երկերում հանդես է գալիս ոչ միայն այնտեղ, որտեղ այդ մասին խոսվում կամ ձևակերպում է տրվում։ Մարքսիզմ-լենինիզմի մեծ կլասիկների բոլոր անալիզների ու բնութագրությունների բուն ոգին դիալեկտիկան է, սկզբից մինչև վերջը, անկախ նրանից, թե դիալեկտիկայի մասին՝ որպես այդպիսինի խոսք կա՞ թե ոչ։

Դեռ չի խոսվել ու գրվել ընկեր Ստալինի վաղ շրջանի երկերի հսկայական գաղափարական-քաղաքական նշանակության, փիլիսոփայական-թեորիական հարստության մասին ընդհանրապես վերցրած։ Այժմ հասել է մեր գաղափարախոսական աշխատանքի հաջորդ՝ ավելի բարձր աստիճանը, այն է՝ այդ երկերի թեմատիկ կամ, եթե ուզում եք, պրոբլեմային, հետևաբար ավելի խոր ուսումնասիրության և յուրացման ժամանակը։

Ի՞նչ տեղ է հատկացնում ընկեր Ստալինը դիալեկտիկական մեթոդին մարքսիստական ամբողջ աշխարհայացքի սիստեմում։ Մարքսիստական, մատերիալիստական դիալեկտիկան, — սովորեցնում է ընկեր Ստալինը,— բաղկացուցիչ մասն է, հիմնական կողմերից մեկը դիալեկտիկական մատերիալիզմի, որի մյուս կողմը մատերիալիստական թեորիան է։ Մեկը առանց մյուսի աներևակայելի է։ «Մարքսիզմը,— գրել է ընկեր Ստալինը դեռ 40 տարի սրանից առաջ,— ոչ միայն սոցիալիզմի թեորիան է, դա մի ամբողջական աշխարհայացք է, փիլիսոփայական մի սիստեմ, որից ինքնին բխում է Մարքսի պրոլետարական սոցիալիզմը։ Այս փիլիսոփայական սիստեմը կոչվում է դիալեկտիկական մատերիալիզմ (Ի. Ստալին, Երկեր. հատոր I, էջ 335)։[1] Այսպիսով փիլիսոփայական մտքի հանճարեղ կորիֆեյ ընկեր Ստալինը ընդգծում է մարքսիզմ-լենինիզմի կարևոր առանձնահատկությունը՝ նրա գաղափարական բովանդակության հարստությունն ու ամբողջականությունը. դիալեկտիկական մեթոդը, մատերիալիստական թեորիան, գիտական սոցիալիզմը՝ ծրագրային ու տակտիկական իրենց ամբողջության և միասնության մեջ։ Այն գաղափարը, որ ամբողջ մարքսիզմը, նրա բոլոր մասերը, կողմերը, սկսած ընդհանուր փիլիսոփայական սկզբունք-

[1] Հետագայում կմատնանշվեն հատորի միայն էջերը։

ներից և վերջացրած կոնկրետ ծրագրային պահանջներով ու տակտիկական գրույթներով, մեկ ամբողջական սիստեմ է կազմում,—այդ գաղափարը թափանցում է ամբողջ հատորը։ Ինքնըստինքյան այդ գաղափարը դիալեկտիկայի կարևորագույն սկզբունքն է։ Մարքսիստական աշխարհայացքի մասերն իրենց ներքին իմաստով և բովանդակությամբ, օրգանապես նույնքան կապակցվում են իրար, որքան կենդանի ծաղկի մասերը բաժակը, պսակը, առէջքը, վարսանդը, որոնցից յուրաքանչյուրը կարելի է հասկանալ միայն մյուս մասերի կապակցությամբ և ամբողջի ընդհանուր սիստեմում։ Մարքսիստական դիալեկտիկան ունի մատերիալիստական բովանդակություն. իր հերթին մարքսիստական մատերիալիզմը ունի դիալեկտիկական բնույթ։ Դիալեկտիկական մատերիալիզմից տրամաբանորեն բխում է պրոլետարական սոցիալիզմը։ Հետևելով Լենինին և նրա հետ միասին հիմնավորելով ու պաշտպանելով ռևոլուցիոն մարքսիզմը, ընկեր Ստալինն անդադար պայքար է մղում մարքսիզմի բոլոր հակառակորդների դեմ, բուրժուական գաղափարախոսության բոլոր արտահայտությունների դեմ։ Ընկեր Ստալինը մերկացնում է բերնշտայնականների ռեֆորմիզմը և անարխիստների տգիտությունն ու ավանտյուրիզմը։

Այն ժամանակ, այսինքն 40–50 տարի առաջ (և ոչ միայն այն ժամանակ) ոմանք կարծում էին, թե ռեֆորմիզմը, անարխիզմը և մարքսիզմը—դրանք սոցիալիզմի տարբեր վարիանտներ են, որոնք միմյանցից տարբերվում են միայն իրենց տակտիկայով և ոչ թե արմատական սկզբունքներով, ամբողջ թեորիայով ու ծրագրով։ Ընկեր Ստալինը ընդգծել է այդպիսի հայացքների միանգամայն անհիմն լինելը, ապացուցել ռեֆորմիզմի և անարխիզմի սկզբունքային ամբողջ հակադրությունը, լիակատար թշնամությունը ռևոլուցիոն մարքսիզմ-լենինիզմին։ Ռեֆորմիզմի մասին ընկեր Ստալինը դրել է. «Ռեֆորմիզմը (Բերնշտայնը և ուրիշներ), որը սոցիալիզմը լոկ մի հեռավոր նպատակ է համարում և ուրիշ ոչինչ, ռեֆորմիզմը, որը փաստորեն ժխտում է սոցիալիստական ռևոլուցիան և փորձում է սոցիալիզմ հաստատել խաղաղ ճանապարհով, ռեֆորմիզմը, որը քարոզում է ոչ թե դասակարգերի պայքար, այլ նրանց համագործակցություն,—այս ռեֆորմիզմն օրեցօր քայքայվում է...» (էջ 331—332)։ Բուրժուական քաղաքագետները և գաղափարախոսները սոսկում են մարքսիստական դիալեկտիկայից, արհամարհում այն, իսկ ռեֆորմիստները նրանց ետևից մանում են ճահիճը, գոռհկացնում են դիալեկտիկան, այն փոխարինելով խաղաղ, զոռհիկ էվոլյուցիայով, անդորրության հովվերգական պատկերով, առանց պայքարի, ընդհարումների, առանց վճռական գործողությունների։ Օրինակ, Բերնշտայնը Մարքսին կշտամբում էր ռևոլուցիոն դիալեկտիկայի համար. ռեֆորմիստը չի կարող տանել հակասությունները, խիստ անցումները, պայքարը, մանավանդ մասսաների պայքարը։ Մեր ժամանակների ռեֆորմիստների վարքագիծը (պատմության որքան դասերից հետո) ռեֆորմիզմի այն գնահատականի արդարացիության նոր ապացույցն է, որ տվել են Լենինը և Ստալինը դեռ սրանից կես դար առաջ։

Անարխիստները ելնում էին պատմության սուբեկտիվ-իդեալիստական ըմբռնումից, պատմության մեջ վճռական դերը հատկացնում էին սոցիալական բազայից մեկուսացած անհատներին, չէին ընդունում դասակարգային պայքարը, ժխտում էին պրոլետարիատի դիկտատուրան և նրա

պետական իրադրության անհրաժեշտությունը։ «Պարզ է, որ այստեղ մենք ունենք միմյանց ժխտող երկու սկզբունք, և ոչ թե լոկ տակտիկական տարաձայնություններ» (333—334)։

Հիշեցեք նաև Պլեխանովի հայացքների քննադատությունը ընկեր Ստալինի կողմից։ «Ես կարծում եմ, որ Պլեխանովը ետ է մնացել նոր ուղղերից։ Նրա աչքին հին ոպոնենտներն են երևում, և նա հին ձևով կրրկնում է. «հասարակական գիտակցությունը հասարակական կեցությամբ է որոշվում», «իդեաները երկնքից չեն ընկնում»... Բայց բանն այն է, որ այժմ խոսքը բոլորովին այլ բանի մասին է։ Այդ ընդհանուր ֆորմուլան մենք վաղուց ենք մարսել, հասել է այդ ընդհանուր հարցը դետալիզացիայի ենթարկելու ժամանակը։ Այժմ մեզ այն է հետաքրքրում, թե ինչպես է առանձին իդեաներից իդեաների սիստեմ (սոցիալիզմի թեորիան) մշակվում, թե ինչպես են առանձին իդեաներն ու իդեիկները կապակցվում և կազմում մեկ կուռ սիստեմ—սոցիալիզմի թեորիան, ե ով է դրանք մշակում ու կապակցում» (64)։ Այստեղ և շատ այլ տեղերում ընդգծվում է մարքսիստական փիլիսոփայության և ռևոլուցիոն շարժման զարդացման կենդանի կապը, ընդգծվում է թեորիայի և պրակտիկայի միասնությունը, դիալեկտիկական մատերիալիզմի ստեղծագործական բնույթը, նրա կապը կյանքի նոր խնդիրների հետ։ Ռևոլուցիոն պրոցեսի զարդացման կապակցությամբ փիլիսոփայական ընդհանուր սկզբունքները պետք է լրացնել մասսայի ու ղեկավարների փոխհարաբերությունների, բանվորական տարերային շարժման ու պրոլետարական պարտիայի դիտակցականության, էկոնոմիկայի ու քաղաքականության, էկոնոմիկայի ու դաղափարախոսության փոխհարաբերության նոր, ավելի խորը ըմբռնումով։

Ընկեր Ստալինի այս պարզաբանումները Մարքսի, Էնգելսի և Լենինի դիալեկտիկական այն հայտնի թեզի հետագա կոնկրետացումն են, որ մարքսիստական ուսմունքը դոգմա չէ, այլ գործողության մեթոդ, ղեկավարություն, որ թեորիան պետք է պատասխանի կյանքի, պատմության, պրակտիկայի առաջադրած նորանոր հարցերին, պետք է բացահայտի պատմական պրոցեսի դիալեկտիկան և ձևակերպի գործնական պայքարի լոզունգները։

Այստեղից ակներև է դիալեկտիկայի հիմնավորման և կիրառման երևելի առանձնահատկությունը ընկեր Ստալինի գործերում, այն է՝ դիալեկտիկան քննարկել պրոլետարիատի, գյուղացիության դասակարգային պայքարի փորձի, ժողովուրդների ազատագրական շարժման փորձի հետ անթեղելի կապի մեջ։ Ձևակերպելով դիալեկտիկայի (և մատերիալիզմի) կառուցողական դրույթները, ընկեր Ստալինը տեսականորեն խորը և համարձակ թեորիական ընդհանրացման է ենթարկում տնտեսական, քաղաքական ու դաղափարական կյանքի հսկայական նյութը։ Թեորիապես հիմնավորելով պարտիայի տակտիկան բանվորական շարժման տարբեր էտապներում, ընկեր Ստալինը դրանով իսկ սրում է բուն թեորիան, մատերիալիստական դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները։ Այսպիսով նոր ուժով է բացահայտվում դեռևս տասնյակ տարիներ առաջ ընկեր Ստալինի արտահայտած այն ճշմարտությունը, որ ռևոլուցիոն թեորիան ռևոլուցիոն շարժման փորձն է ամբողջությամբ վերցրած։

Եվս մեկ էական առանձնահատկություն, որը դրսևորվում է ընկեր Ստալինի դեռևս վաղ երկերում, այն է՝ դիալեկտիկայի սկզբունքների քննարկումը կոնկրետ գիտությունների (բնական և հասարակական) նյութի հետ սերտ կապակցված, այդ սկզբունքների հիմնավորումը գիտական տվյալներով։ Այս տվյալների լույսի տակ մենք պարզ կերպով տեսնում ենք, որ արդեն այն ժամանակ ընկեր Ստալինը գիտեր և ըստ արժանվույն լուսաբանում ու գնահատում էր բնագիտության ու սոցիոլոգիայի կարևորագույն նվաճումները։ Բավական է թվարկել այն գիտնականների անունները, գիտական հայտնագործությունները, որ վկայակոչում է ընկեր Ստալինը, որպեսզի մեզ պատկերացնենք գրեթե պատանի Ստալինի մաահորիզոնի լայնությունը, թեորիական գիտելիքների և ընդհանրացումների դիապազոնը, համոզմունքների ուժն ու հաստատականությունը։

Այն թեզը, որ դիալեկտիկական մեթոդը պետք է գիտել կոնկրետ գիտությունների պատմության, ժամանակակից նվաճումների ու մակարդակի հետ անխզելիորեն կապակցված՝ այդ թեզը մարքսիզմ-լենինիզմի սկզբունքային պահանջներից մեկն է։

Էնգելսը բազմիցս ընդգծել է, որ աշխարհի նկատմամբ դիալեկտիկական հայացքը սոսկ փիլիսոփայական իդեա չէ, այլև բնագիտական փաստ, մի հայտնագործություն, որը նախապատրաստվել է գիտության զարգացման ամբողջ ընթացքով։ Զարգացնելով Էնգելսի այս դրույթը, Լենինը ապացուցում էր, որ մարքսիստական դիալեկտիկան, իմացաբանությունը և տրամաբանությունը նախապատրաստվել են մարդկային գիտության բոլոր բնագավառների զարգացումով, հանդիսանալով նրա հանրագումարը։ Լենինը միանգամայն պակասավոր էր համարում դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները քննարկել առանց բնագիտական նյութի անալիզի։ Միանգամայն հասկանալի է, որ բացահայտելով դիալեկտիկայի՝ որպես խսաիվ գիտական, օբեկտիվ մեթոդի, հարուստ բովանդակությունը, ընկ. Ստալինը այն դիտում է որպես հասարակական և գիտական մաքի մեծագույն նվաճում։ Դիալեկտիկայի բովանդակության ճշմարտությունը լիովին հաստատվում է բոլոր մեծ հայտնագործությունների կողմից։ Իր արդեն վաղ շրջանի հոդվածներում ընկեր Ստալինը հենվում է 19-րդ դարի կեսերի ռուս մեծ դիալեկտիկ Չերնիշևսկու վրա, մաթեմատիկայի (Լայբնից, Պասկալ), կոսմոգոնիայի (Կանտ, Լապլաս), ֆիզիկայի (Մայեր, Հելմհոլց), էվոլուցիոն թեորիայի (Լամարկ, Դարվին), քիմիայի (Մենդելեև) նվաճումների վրա։ Այս բոլորից ելնելով, ընկեր Ստալինը հետեյալ հիմնական մտքին է հանգում. «Գիտության պատմությունը ցույց է տալիս, որ դիալեկտիկական մեթոդը հանդիսանում է իսկապես գիտական մեթոդ. սկսած աստղաբաշխությունից և վերջացրած սոցիոլոգիայով—ամենուրեք հաստատումն է գտնում այն միտքը, որ աշխարհում հավիտենական ոչինչ չկա, որ ամեն ինչ փոփոխվում է, ամեն ինչ զարգանում է։ Հետևապես, ամեն ինչ բնության մեջ պետք է դիտվի շարժման, զարգացման տեսակետից։ Իսկ այդ նշանակում է, որ դիալեկտիկայի ոգին տոգորում է ամբողջ ժամանակակից գիտությունը» (338—339)։

Այստեղից ակներևորեն հետևում է, որ մարքսիստական դիալեկտիկայի հիմնական դրույթներից մեկը շարժման և զարգացման սկզբունքն է։ Այս գծի կենսական ճշմարտացիությունը հաստատվել է ոչ միայն գիտա-

կան հայտնագործություններով, այլև դասակարգային պայքարի, ռևոլուցիաների ու պատերազմների փորձով, մարդկային ամբողջ պրակտիկայով։ Դիտելով բնության, հասարակության, հոգևոր կուլտուրայի փաստերն ու երևույթները, մենք հեշտությամբ համոզվում ենք, որ այստեղ ոչինչ հավերժական անդորրության և անփոփոխության մեջ չէ, այլ ընդհակառակը ամեն ինչ ծագում և զարգանում է, այսինքն՝ վերածվում է մի այլ, ավելի բարձր երևույթի, մինչդեռ հինը, իր դարն ապրածը անհետանում, քայքայվում է։ Օբյեկտիվ աշխարհը ոչ թե պատրաստի առարկաների գումար է, այլ զարգացման պրոցես, որը ընթանում է միանգամայն որոշակի օրենքների համաձայն։ Ամեն ինչ պատմական է, ամեն ինչ ունի իր անցյալը, իր ներկան և իր ապագան։ Այդ կենսական ճշմարտությունն է հենց, որ ձևակերպել է ընկեր Ստալինը որպես դիալեկտիկայի օրենք։

Ընկեր Ստալինը գրել է. «Կյանքը չի կարելի ինչ-որ անփոփոխ և քարացած բան համարել, նա երբեք կանգ չի առնում մեկ մակարդակի վրա. նա հավիտյան շարժման մեջ է գտնվում, քայքայման ու ստեղծման հավիտենական պրոցեսի մեջ։ Ուստի կյանքում միշտ գոյություն ունի նորը և հինը, աճողն ու մեռնողը, ռևոլուցիոնը ու կոնտրռևոլուցիոնը» (335)։ Այստեղից բխում է մարքսիստական դիալեկտիկայի կենսականությունը. նրա սկզբունքները ոչ թե մեր մտքի կամայական հորինվածքն են, ոչ թե ապրիորի սխեմաներ, ոչ թե երևակայության խաղ, այլ բուն կյանքի թեորիական արտահայտությունը։ «Դիալեկտիկական մեթոդը ասում է, որ կյանքը պետք է դիտել հենց այնպես, ինչպես նա կա իրականում»։

Բայց այստեղից բխում է ռևոլուցիոն դասակարգի և պարտիայի համար չափազանց կարևոր ծրագրային հարց. եթե կյանքը հակասական է, եթե նա պրոցես է, որի մեջ միահյուսվում են հինը և նորը, հեռացողը և ծագողը, քայքայվողը և ստեղծվողը, ապա պրակտիկ գործողությունների համար չափազանց կարևոր է ճիշտ ըմբռնել ռեալ իրականության օբյեկտիվ տենդենցը, այսպես ասած նրա զարգացման ուղղությունը, այն է՝ ըմբռնել թե ինչն է քայքայվում և ինչն է ստեղծվում կյանքում, պատկերացնել պրոցեսն ամբողջությամբ առած և իր վարիացիաներում՝ նրան ռևոլուցիոն դասակարգի նպատակներին ու խնդիրներին ենթարկելու համար։ Պետք է հշգրիտ կերպով պարզել, թե ո՞ր դասակարգը, որ պարտիան է կազմավորվում, աճում և որը անհետանում, հասարակական որ հարաբերություններն են քայքայվում և որոնք են, ընդհակառակը, ծագում և ձևավորվում։ Զարգացման այդ օրենքից բխում է՝ «Այն, ինչ որ կյանքում ծնվում և օրեցօր աճում է,—անհաղթահարելի է, նրա առաջընթաց շարժումը կանգնեցնելն անկարելի է»։ Գիտական այս համոզմունքը մտել է մեր գիտակցության մեջ և հանդիսանում է մեր ռևոլուցիոն գործունեության ամուր հենարանը։ Ընկ. Ստալինի արդեն վաղ երկերով կարմիր թելի պես անցնում է մի հաստատ համոզմունք, այն է՝ կոմունիզմի համար մղվող մեր հերոսական պայքարում, մեր ամբողջ կիրքն ու եռանդը մենք իզուր չենք վատնում, կյանքը ունայնությունների ունայնություն չէ։ Մենք լավ հիշում ենք Մարքսի խորաթափանց խոսքերը «... Մենք չենք ասում աշխարհին՝ դադարիր պայքարելուց, որովհետև քո պայքարն աննպատակ է. մենք նրան միայն տալիս ենք պայքարի լոզունգներ»։ Ռեակցիոն դասակարգերը, պետությունները, պարտիաները միշտ դիմադրել են նոր ուժերին,

դասակարգերին, նոր ուսմունքներին։ Բոլոր հին ուժերը ձգտել են ճնշել մարքսիզմը. բանվորական շարժման աճումը, ռևոլյուցիան, սովետական կարգի զարգացումը։ Բայց նորն անհաղթահարելի է, նա վերջիվերջո հաղթանակում է։ Պետք է նայել դեպի առաջ և ոչ թե ետ։

Ահա սա է մարքսիստական դիալեկտիկայի առաջադիմական ռևոլյուցիոն իմաստը. պետք է նայել առաջ և ոչ թե ետ։

Դեռևս անցյալ դարի իննսունական թվականներին Ռուսաստանի բանվորական շարժման արշալույսին, Լենինը և մյուս մարքսիստները, ելնելով ռուսական կապիտալիզմի օբյեկտիվ դիալեկտիկայից, նրա զարգացման և հակասությունների օրենքներից, ճիշտ էին գնահատում բանվորական շարժման դերը, այն համարելով վճռական ուժը Ռուսաստանի ապագա բարեփոխությունների պրոցեսում, նախագուշակում էին նրա զարգացման ընթացքը, ճիշտ էին ըմբռնում նրա էական խնդիրները։ Մարքսիստական դիալեկտիկա-մատերիալիստական ըմբռնմանը հակադրվում էր պատմության նարոդնիկական մետաֆիզիկական, իդեալիստական ըմբռնումը։ Նարոդնիկները վճռական ուժ համարում էին գյուղացիությունը և քաղաքի մանր բուրժուազիան այն հիման վրա, որ նրանք աղքատ են և բազմաթիվ։ Մարքսիստները հերքում էին այդ տեսակետը, ապացուցելով, որ խնդիրը ոչ թե քանակի և աղքատության մեջ է, այլ այն բանի մեջ, որ քաղաքի և գյուղի մանր բուրժուազիան կապված է արտադրության հետամնաց ձևերի հետ ու քայքայվում է կապիտալիզմի զարգացման հետևանքով, իսկ պրոլետարիատը կապված է արտադրության առաջավոր ձևի՝ խոշոր արտադրության հետ և նրա զարգացման հետ միասին աճում, համախմբվում, կոփվում, դառնում է վճռող ուժ։ Կազմակերպել պրոլետարիատին, լուսավորել նրան, կազմակերպել նրան և պայքարի դուրս բերել (գյուղացիության հետ միասին) ցարիզմի դեմ, կալվածատերերի ու բուրժուազիայի դեմ, ահա բոլոր ազնիվ ռևոլյուցիոներների, առաջադիմության ճշմարիտ կողմնակիցների պատմական մեծ խնդիրը։ Այսպես էին հասկանում մարքսիստներն իրենց խնդիրները։ Հաղթանակեց մարքսիզմը և ոչ թե նարոդնիկությունը, հաղթանակեց դիալեկտիկան և ոչ թե մետաֆիզիկան։ «Ակնհայտ է,—գրել է ընկեր Ստալինը,—որ մարքսիստները դիալեկտիկորեն էին նայում կյանքին, մինչդեռ նարոդնիկները դատում էին մետաֆիզիկորեն, նրանք հասարակական կյանքը պատկերացնում էին մի կետում քարացած» (338)։

Հին, ռեակցիոնի և նորի, առաջադիմականի պայքարը շարունակվում է նաև այսօր, թեև պայքարող ուժերի հարաբերակցությունն այժմ այլ է, քան այն ժամանակները, երբ ընկեր Ստալինը գրում էր վերը բերած խոսքերը։ Մեր երկրում կյանքն անընդհատ առաջ է գնում, զարգանում են սոցիալիստական հասարակական աշխատանքի, արտադրության, քաղաքական կյանքի, կուլտուրայի նոր, ավելի բարձր ձևեր, հին ձևերը անխուսափելիորեն հաղթահարվում են։ Միջազգային ասպարեզում հստակորեն գործում և պայքարում են երկու հակադիր մեթոդ, երկու տենդենց։ Մեկ տենդենցը— առաջավոր ուժերի՝ աշխատավորների, դեմոկրատական պարտիաների ու կառավարությունների ձգտումն է՝ հաստատել հասարակական և պետական նոր, առաջադիմական կարգեր. սոցիալիզմը շատ երկրների համար անմիջական և ռեալ խնդիր է։ Նրանք գտնում են, որ կյանքն առաջ է գնում, որ ֆաշիստական երկրների պարտությունը և դեմոկրատական երկրների հաղթա-

ստակը բուրժուական աշխարհում պատմական անհրաժեշտությամբ պետք է հանգեցնի և հանգեցնում է հասարակական և պետական ավելի առաջադիմական ձևերի, քան այն ձևերը, որոնք գոյություն ունեին մինչև պատերազմը։ Այդ տենդենցը գլխավորում է Սովետական Միությունը։ Մեր լոզունգն է՝ պետք է նայել առաջ և ոչ թե ետ։ Պատմության, հասարակական զարգացման և առաջադիմության նկատմամբ ամենից ավելի քիչ կիրառելի են Ֆաուստի այն խոսքերը, որոնք նվիրագործում են ձեռք բերված հաջողությունների մոմենտը. «ակնթարթ, դու դեղեցիկ ես, կանգ առ, հարատևիր», ըստ որում այդ «ակնթարթը» հայտարարվում է կյանքի բարձրագույն վայրկյանը, ընդդեմ դարերի ընթացքի։

Մյուս մեթոդը, մյուս տենդենցը, դա այն բոլոր ուժերի, խմբերի, դասակարգերի ու պարտիաների ռեակցիոն քաղաքականությունն է, որոնք մշտապես ետ-ետ են գնում, ապավինելով անցյալին։ Այդ տենդենցը գլխավորում են ռեակցիոն շրջանները, քաղաքագետները և դիվանագետները Անգլիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում։ Նրանց ավանգարդում ընթանում են Չերչիլը և նրա կողմնակիցները անգլո-սաքսոնական երկրներում։ Նրանք պաշտպանում են գաղութային ռեժիմը, փորձում են ընդլայնել իրենց իմպերիալիստական տիրապետությունը մյուս ժողովուրդների նկատմամբ, Նրանք ամեն կերպ դիմադրում են Եվրոպայում և մյուս երկրներում իսկապես դեմոկրատական կարգերի հաստատմանը։ Ընկեր Մոլոտովը Փարիզի Խաղաղության կոնֆերանսում ցույց տվեց, որ նրանք մի ամբողջ դար ետ են նայում։ Տրումենի վերջին դիմումը Կոնգրեսին Հունաստանին և Թուրքիային օգնելու կապակցությամբ կրկին հաստատում է այդ։ Այսպիսով լենինյան-ստալինյան դիալեկտիկան մեզ օգնում է հասկանալու համաշխարհային պատմության և դանադան երկրների ներքին պատմության ամենաբարդ իրադարձությունները և պրոցեսները։

Եթե շարժումը ամբողջ կյանքի, բնության ու հասարակության օրենքն է, ապա որոնք են այդ շարժման ձևերը։ Պատասխանելով այդ հարցին, ընկեր Ստալինը զարգացնում է շարժման երկու ձևերի ուսմունքը աստիճանական, էվոլյուցիոն և թռիչքաձև (որակական) շարժման ուսմունքը։ Շարժման երկու ձևերի այսինքն՝ քանակական փոփոխություններից որակական փոփոխություններին անցնելու օրենքը բնության և հասարակության և քաղաքական կյանքի գիտական ըմբռնման կարևոր օրենքներից մեկն է։ Չէ՞ որ կարելի է ընդունել շարժումը և ուսումնասիրել, աղքատացնել նրա բովանդակության ամբողջ հարստությունը, այն հանգեցնել միայն դանդաղ, սոսկ քանակական փոփոխությունների, իսկ հասարակության առաջավոր ուժերի ամբողջ գործունեությունը գործնականորեն հանգեցնել հին կարգերը կարկատելու խղճուկ աշխատանքին։ Հենց այսպես են հասկանում գործը ռեֆորմիստները. կամ ընդհակառակը բովանդակազուրկ անելով դիալեկտիկան, ընդունել բացառապես պատահական թռիչքներ, ուրեմն չով չհիմնավորված կատակլիզմներ և կատաստրոֆներ, առանց կյանքի խորը բարեփոխումների լուրջ, ժամանակային, հիմնավոր նախապատրաստական աշխատանքի։ Գործնականորեն սա հանգեցնում է քաղաքականության ասպարեզում ավանտյուրիզմի, հիստերիայի։ Հենց այդպես են հասկանում գործը անարխիստները, էսերները, բոլոր ավանտյուրիստները։ Իսկական զարգացում, այսինքն՝ կյանքի ցածր ձևերի անցումը բարձր ձևերին, չկա ոչ մեկ և ոչ էլ մյուս ըմբռնման մեջ։

«Պարզ է,—գրել է ընկեր Ստալինը,—որ շարժումը տարբեր ձևեր ունի։

Եվ ահա դիալեկտիկական մեթոդն ասում է, որ շարժումն ունի երկակի ձև—էվոլյուցիոն և ռևոլյուցիոն։

Շարժումն էվոլյուցիոն է, երբ պրոգրեսիվ տարրերը տարերայնորեն շարունակում են իրենց ամենօրյա աշխատանքը և հին կարգերի մեջ մանր, քանակական փոփոխություններ են մտցնում։

Շարժումը ռևոլյուցիոն է, երբ նույն տարրերը միավորվում, համակվում են միասնական իդեայով և նետվում են թշնամի բանակի դեմ, որպեսզի արմատապես ոչնչացնեն հին կարգերը և որակական փոփոխություններ մտցնեն կյանքի մեջ, նոր կարգեր հաստատեն» (էջ 338)։ Հասարակական հարաբերությունները փոփոխվում էին քանակապես, էվոլյուցիոն ձևով մինչև 1905 թվի դեկտեմբերյան օրերը։ Բայց դեկտեմբերյան օրերին պրոլետարիատի զինված ապստամբությունը, սովետների կողմից ութժամյա բանվորական օրվա, մամուլի և ժողովների ազատության բռնի իրագործումը, բանակի, նավատորմի, գյուղացիների ու ճնշված ազգությունների ապստամբությունները— այս բոլոր որակական փոփոխություններ էին։ Կամ վերցնենք մի ուրիշ օրինակ. 1917 թվի ապրիլից սկսած Ռուսաստանում հարաբերությունները զարգանալով էվոլյուցիոն ձևով ընդհուպ մոտեցրին որակական փոփոխությունների։ Եվ ահա 1917 թվի հոկտեմբերին մենք տեսնում ենք համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող ռևոլյուցիոն արմատական հեղաշրջում. թռիչքաձև անցում բուրժուա-կալվածատիրական հին հասարակակարգից դեպի սովետական, հասարակական և պետական նոր կարգը, առաջ եկավ նոր որակի հասարակակարգ զարգացման նոր օրինաչափություններով։ Կամ՝ մինչև 1929 թիվը մեր գյուղատնտեսության մեջ զարգանում էին կոոպերացիան, առանձին կոլխոզներ, գյուղատնտեսության մեջ արմատանում էր տրակտորը և այլն։ Դա էվոլյուցիոն զարգացում էր, բայց այն հող ու նախադրյալներ նախապատրաստեց մեծ թռիչքի համար։ Եվ այդպիսի թռիչք իրոք սկսվեց 1929 թվին։ Դա արմատական, որակական փոփոխությունների տարի էր։ Ընկեր Ստալինն այդպես էլ որակեց «մեծ բեկման տարի»։

Զարգացման երկու ձևերի ստալինյան ուսմունքի կապակցությամբ պետք է ընդգծել հետևյալը. կարևոր է ոչ միայն տարբերել զարգացման երկու ձևեր, այլև պարզորեն պատկերացնել յուրաքանչյուր ձևի դերը. նրանց փոխադարձ կապը զարգացման պրոցեսում. Նրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները։ Ռևոլյուցիոն հեղաշրջումների ժամանակ առանձնապես բարձրանում է մասսաների, դասակարգերի, պարտիաների դերը, պատմական պրոցեսի տեմպերը արագանում են. օրեր կամ ամիսների ընթացքում լուծվում են էվոլյուցիոն զարգացման տարիների և տասնամյակների ընթացքում հասունացած հակասությունները։ Մյուս կողմից չի կարելի իրարից կտրել էվոլյուցիան և թռիչքը։ Այդ ձևերից յուրաքանչյուրն ունի իր տեղը և նշանակությունը, բայց մեկ ձևը կարելի է հասկանալ միայն մյուս ձևի կապակցությամբ։

«Էվոլյուցիան նախապատրաստում է ռևոլյուցիան և հող է ստեղծում նրա համար, իսկ ռևոլյուցիան ավարտում է էվոլյուցիան և աջակցում է նրա հետագա աշխատանքին» (338)։

Մատերիալիստական դիալեկտիկայի այս, ինչպես և մյուս գծերը, օրենքներն ու կատեգորիաները փաստերի հսկայական մասսայի ընդհանրացումն են և հաստատվում են պրակտիկայի ու գիտության ամբողջ ընթացքով։ Եվ իսկապես, բնագիտությունն արդեն 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին բնությունը պատկերացնում էր որպես զարգացման պատմական պրոցես, պատկերելով այդ զարգացման կոնկրետ ընթացքը, նրա աստիճաններն ու ֆազերը, նրանց անցումներն ու կապերը։ «Մենք գիտենք, օրինակ, որ երկրագունդը ժամանակին եղել է շիկացած կրակե գնդված, հետո նա աստիճանաբար սառել է, հետո առաջ են եկել բույսերն ու կենդանիները, կենդանական աշխարհի զարգանալուց հետո երևան են եկել որոտեսակի կապիկներ և ապա այդ բոլորից հետո հայտնվել է մարդը» (էջ 348)։

Արեգակնային սիստեմի ծագման և զարգացման կանտ-լապլասյան տեսությունը,* էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը, էվոլուցիոն տեսությունը, էլեմենտների մենդելեևյան պարբերական սիստեմը, հասարակական գիտությունները զարգացման դիալեկտիկական կոնցեպցիայի ճշտության փայլուն ապացույցներ են։

Զարգացման պատմական պրոցես է ներկայացնում նաև մարդկային հասարակությունը, որի հիմնական աստիճանները պատկերված են սոցիոլոգիայի և պատմական այլ գիտությունների կողմից։ Փոփոխվել ե իրար փոխարինել են արտադրության զանազան եղանակներ, մարդկանց կենսաձևերը, բարքերն ու սովորությունները, հասարակական կազմավորումները, որսորդությունն ու նրա հետ կապված նախնադարյան համայնական հասարակությունը, նախնադարյան հողագործությունն ու մատրիարխատը, անանձնապահությունը և պատրիարխատը, ստրկատիրական հասարակությունը, ֆեոդալական և բուրժուական հասարակությունները, իսկ մեր երկրում կապիտալիզմը փոխարինվել է սոցիալիզմով։ Հետևաբար պատմականորեն միանգամայն օրինաչափ է և ոչ թե պատահական բուրժուական հասարակարգի փոխարինումը նոր, ավելի առաջադիմական ժողովրդա-դեմոկրատական և սոցիալիստական կարգերով։

Միանգամայն ակներև է, որ բնության և հասարակության մեջ զարգացումը ոչ թե զոսկ քանակական աճման պրոցես է, ոչ թե զուտ էվոլուցիոն պրոցես, այլ մեկ աստիճանը մյուս, որակապես ավելի բարձր աստիճանով փոխարինելու պատմական պրոցես։ Ընկեր Ստալինը մատնանշում է, որ «Դիալեկտիկայի ոգին թափանցում է ժամանակակից ամբողջ գիտությունը» և որ «դիալեկտիկական մեթոդը իսկական գիտական մեթոդ է»։

Այս լույսի տակ ակնհայտ է զարգացման դիալեկտիկական կոնցեպցիայի լիակատար հակադրությունը ռեֆորմիստների, անարխիստների և այլ մետաֆիզիկների հայացքներին։ Նրանք միանգամայն դոեհկացրել են բնության և հասարակության զարգացման էությունը։ Զարգացման բուն հասկացողությունը նրանց մոտ կորցրել է ամեն մի իմաստ, վերածվել է կամ Ֆյուվեի կատակլիզմների տեսության, կամ նույնացվել է զարգացման գոեհիկ-էվոլուցիոն կոնցեպցիայի հետ, կամ հակադրվել է Բարվինի տեսությանը, կամ նույնացվել է նրա հետ։ Բա մարքսիզմի բոլոր թշնամիների

* Ինչպես, որ այդ հիպոթեզի շատ դրույթները այսօր հնացել են։

ընդհանուր մեթոդն է. նրանք դիալեկտիկային են վերագրում հենց իրենց հնարած հատկությունները և ապա սկսում են հեշտությամբ «ջատագովել» այն։ Անարխիստներն, օրինակ, հնարում էին իրենց հատուկ «դիալեկտիկան» և հենց այդ դիալեկտիկայի դեմ անխնա ճակատամարտ էին մղում, ինչպես Դոն-Քիշոտը՝ հողմաղացների դեմ։

Անարխիստների կարծիքով դիալեկտիկները որպես թե պատմական զարգացման պրոցեսը պատկերացնում են այնպես, որ անցյալը հանկարծակի կատաստրոֆիկ կերպով ոչնչանում է, իսկ ապագան միանգամայն մեկուսացած, հայտնի չէ թե որտեղից հաստատվում է, որպես թե դիալեկտիկները պատմական ոչ մի հաջորդականություն չեն ճանաչում, ամբողջ անցյալը դեն են նետում որպես համատարած թյուրիմացություն, սխալներ, մոլորություններ և այլն։ Պատմության այդ զուտ սուբեկտիվիստական, հակապատմական ըմբռնումը անարխիստները վերագրում էին մարքսիզմին։

Մարքսիստական գիտությանը խորթ է սկեպտիկ, նիհիլիստական վերաբերմունքը պատմության նկատմամբ. ընդհակառակը, մեր ամբողջ գործունեությունը պայմանավորված է նրա օրինաչափ ընթացքով։ Այդ ընթացքն այն է, որ մի կողմից ստեղծվում և կուտակվում են նյութական արժեքներ, ստեղծվում են սոցիալական կազմավորումներ և հարաբերություններ, իսկ մյուս կողմից օրինաչափորեն և պարբերաբար նրանք կերպարանափոխվում, արմատապես վերակառուցվում են. հաղթահարվում են իրենց դարն ապրած ձևերը, ստեղծվում են նոր, ավելի բարձր ձևեր։ Անարխիստներին ու ռեֆորմիստներին պատմության այս գիտական ըմբռնումը միանգամայն խորթ է. նրանք կամ ամբողջ հինը մեխանիկորեն ժխտելու տեսակետին են, կամ ստրկամտորեն խոնարհվում են կյանքի հին, բուրժուական ձևերի առաջ։

Ընկեր Ստալինը իր վաղ շրջանի հոդվածներում հաջորդաբար քննարկելով և հերքելով մարքսիզմի հակառակորդների հայացքները, բացահայտում է անարխիստների, ռեֆորմիստների, մենշևիկների, էկոնոմիստների, լիբերալների, նացիոնալիստների անտիռեոլուցիոն ամբողջ էությունը, մեթոդոլոգիական ողորմելիությունը, մերկացնում է նրանց հայացքների դոգմատիզմը, սոֆիստիկան։ Մեր առաջ ծավալվում է մարքսիստական մեթոդոլոգիայի տրամաբանորեն կուռ պատկերը, հանդես են գալիս դիալեկտիկայի նորանոր գծերն ու դրույթները՝ երևույթների փոխադարձ կապը և պայմանավորվածությունը, պատմականությունը, հշմարտության կոնկրետությունը, պայքարն ու հակասությունները։ Եվ այդ բոլորը ոչ միայն թեորիապես է ձևակերպվում, այլև վարպետորեն կիրառվում է դասակարգային պայքարի կոնկրետ պրոցեսի, դասակարգերի փոխհարաբերությունների նկատմամբ։

Մարքսիզմի հակառակորդները մարքսիստական դիալեկտիկան նույնացնում են Հեգելի հայացքների հետ, վկայակոչում են դիալեկտիկայի ծագումը, ձգտում են արատավորել այն՝ մատնանշելով Հեգելի ռեստավրատորական ռեակցիոն-արիստոկրատական հայացքները, մետաֆիզիկական սիստեմը։ Ընկեր Ստալինը մերկացնում է այդ կեղծիքը։ Նախ Մարքսը և Ինգելսը ամենից առաջ և ամենից խորը կերպով են քննադատել Հեգելի իդեալիզմը, միստիկան և ռեակցիոն քաղաքական հայացքները։ Երկրորդ՝ Մարքսը և Ինգելսը հստակ կերպով տարբերում էին Հեգելի ուսմունքի մեջ առաջադի-

մական կողմը, այսինքն՝ դիալեկտիկական ռացիոնալ հատիկը, ռեակցիոն քաղաքական հայացքներից և իդեալիստական սիստեմից։ Առաջին կողմը նրանք վերամշակում էին, իսկ երկրորդը միանգամայն դեն էին նետում. Ընկեր Ստալինը այս կապակցությամբ սահմանում է մի որոշ օրինաչափություն, զարգացնում է այն թեզը, որ բուրժուական շատ խոշոր մտածողների և դիտնականների համար (և ոչ միայն Հեգելի համար) բնորոշ է երկվությունը։ Այսպես Պասկալի, Լայբնիցի, Մայերի, Հելմհոլցի, Լամարկի, Դարվինի քաղաքական հայացքների պահպանողականությունը դուրդրվում էր նրանց մոտ կունկրետ դիտական հանճարեղ հայտնագործությունների ու իդեաների հետ։ Դա նույնպես հակասություն է, երկվություն։ Հայտնի է, որ նույնպիսի հակասություն գոյություն ունի անցյալի շատ գեղագետների մոտ, նրանց քաղաքական հայացքների և գեղարվեստական ստեղծագործության միջև։ Ընկեր Ստալինի բացատրությունը ցույց է տալիս, որ Մարքսի և Էնգելսի դիալեկտիկան ոչ միայն տարբեր է Հեգելի դիալեկտիկայից, այլև նրա ուղիղ հակադրությունն է կազմում։

«Ոչ, այդ եղանակով անարխիստները ոչինչ չեն ապացուցի, բացի իրենց սեփական տգիտությունից...

Այ քեզ անարխիստներ։

Ընկեր Ստալինը ծաղրում է անարխիստների մի այլ անհեթեթ պընդումը՝ այն, որ իբր թե դիալեկտիկան մետաֆիզիկա է։ «Դիալեկտիկան հասունացել է մետաֆիզիկայի դեմ մղված պայքարում, այդ պայքարում նա ձեռք է բերել իր փառքը, իսկ անարխիստների կարծիքով դուրս է գալիս, որ դիալեկտիկան—դա մետաֆիզիկա է»։

Դիալեկտիկան ամեն ինչի նայում է քննադատաբար, ժխտում է վերացական, դոգմատիկ դրույթները։ Հայտնի է, որ մարքսիզմ-լենինիզմի կլասիկները միշտ դատապարտել են մետաֆիզիկներ Ֆոյերբախին, Գրուդոնին, Սպենսերին, ուտոպիստներին, նարոդնիկներին և մյուսներին այն բանի համար, որ նրանք գործադրել են վերացական հասկացություններ «հավիտենական արդարության», «ընդհանուր բարոյականության», «անփոփոխ ճշմարտության» մասին, խոսել են առհասարակ բարու և չարի մասին։ Պատմական այս իրողությունը մեզ օգնում է հասկանալ հենց մեր այսօրվա հասարակական-քաղաքական պայքարը։ Բուրժուազիոնական քաղաքագետները և դիվանագետները մեր ժամանակներում ևս դեմ չեն խոսքով գործածելու այնպիսի հասկացություններ, ինչպես «խոսքի, պրոպագանդայի և մամուլի ազատություն», «արդարություն», «հավասար իրավունքներ», «չմիջամտություն» և այլն, սակայն այնքան վերացական, ոչ պատմական, ընդհանուր ձևով, որ այդ հասկացությունները վերածվում են իրենց ուղիղ հակադրությանը, դառնում են ռեակցիոն քաղաքականության, հակաժողովրդական մեքենայությունների, ֆաշիստական սանձարձակ պրովոկացիաների պաշտպանության դիմակ։ Լենինը մեզ սովորեցնում է դատողությունների կոնկրետության։ «Մենք ասում ենք բանվորներին ու գյուղացիներին՝ դիմակազերծ արեք այդ ստախոսներին, բացեք այդ կույրերի աչքերը։ Հարցրեք.

—Մի՞թե սեռի հավասարությունը որ սեռի հետ։

— Ո՞ր ազգինը մի ազգի հետ։

—Ո՞ր դասակարգինը մի դասակարգի հետ։

Ազատություն, որ լծից կամ ձրդասակարգի լծից» (հատոր 24-րդ, էջ 518)։

Եվ իսկապես, «ազատություն», «հավասարություն», «արդարություն», «ներքին գործերին չմիջամտություն» և այլն այս բոլոր վեհ հասկացությունները, եթե դրանք գործածենք արստրակտ կերպով, ոչ պատմականորեն կոնկրետ ձևով, այսինքն իրենց որոշակի նշանակությամբ, օրինակ՝ ժողովուրդների ազատության, բոլոր պետությունների իրավահավասարության (և ոչ թե միայն ուժեղների) իմաստով, արդարության տուժած, ճնշված ազգերի նկատմամբ և այն, այն ժամանակ դրանք կվերածվեն ֆաշիստական պրոպագանդայի ազատության, դոլլարի և ֆունտստերլինգի տիրապետության հավասարության, պատերազմի ֆաշիստական հանցագործների նկատմամբ արդարության, «չմիջամտելը» կդառնա Իսպանիայում գոյություն ունեցող ֆաշիստական կարգերի պաշտպանության միջոց և այլն և այլն։

Հերքելով դիալեկտիկայի հերքական կեղծումը, ընկեր Ստալինը ընթերցողների առաջ ծավալում է նրա կատեգորիաների ճկունությունն ու հարստությունը, երևույթների բազմակողմանիության, կոնկրետության և հակասականության ուսմունքը։ Մետաֆիզիկները դիալեկտիկան նույնացնում են սոֆիստիկայի հետ, այն կոչելով «սոֆիզիմների մեթոդ», տրամաբանական սալտոմորտալե. որի օգնությամբ իբրև թե կարելի է հիմնավորել թե ճշմարտությունը և թե սուտը։ Ընկեր Ստալինը բացահայտում է այդ հերյուրանքների կեղծիքը։ Դիալեկտիկական մեթոդը հակառակ մետաֆիզիկայի, պահանջում է հասկացությունների ճկունություն, բայց այդ ճկունությունը, ի տարբերություն սոֆիստիկայի սուբեկտիվ ճկունության, օբեկտիվ է, համապատասխանում է օբեկտիվ իրականության, որտեղ երևույթների միջև չկա չինական պարիսպ. այստեղ որոշ երևույթներ ծագում են մյուսներից և (որոշ պայմաններում) վերածվում են այլ, նույնիսկ միանգամայն հակառակ երևույթների. տարերային բանվորական շարժումը վերածվում է (դարձյալ որոշ պայմաններում) գիտակցական շարժման, անկազմակերպ շարժումը՝ կազմակերպված շարժման, «խաղաղ» պայքարը՝ զինված պայքարի, էվոլուցիան՝ ռևոլուցիայի և այլն և այլն։ Մինչդեռ տարբերություններ ու զիտակցակցություններ, անկազմակերպություններ ու կազմակերպվածություններ, էվոլուցիան և ռևոլուցիան և այլն դրանք բոլորը հակադիր կատեգորիաներ են։ Կյանքը լի է հակադրություններով, դրանց փոփոխակերպություններով և փոխանցումներով։ Կյանքը հակասական է, նա օբեկտիվորեն ճկուն է։

Այս ըմբռնումը ընդհանուր ոչինչ չունի ոչ մետաֆիզիկայի հետ՝ սրա ավարտված, դոգմատիկ, վերացական պնդումներով հանդերձ, ոչ սոֆիստիկայի հետ՝ սրա կամայական ճկունությամբ հանդերձ, որը ժխտում է ամեն մի որոշություն, հարաբերական կայունություն, հետևաբար ամեն մի օրինաչափություն. ժխտում է ճշմարտության և ստի, առաջադիմության և հետադիմության, բարու և չարի, ազատության և հանցագործության տարբերությունը, կամ անմիջականորեն նույնացնում է այդ հակադրությունները այն հիման վրա, որ մեկը կարող է վերածվել մյուսին։

Պետք է կյանքը դիտել առանց աչքերը փակելու. հարկավոր է ճանաչել և զգալ նրա դարկերակը և «քանի որ կյանքը փոփոխվում և շարժման մեջ է գտնվում, ապա ամեն մի կենսական երևույթ ունի երկու տեսակետ դրական և բացասական, որոնցից առաջինը մենք պետք է պաշտպանենք, իսկ երկրորդը մերժենք» (345—346)։

Դիալեկտիկայի էությունը երևույթների կոնկրետության, առարկայի կամ իրադարձության բոլոր կողմերի կապի, նրանց բազմազան և հակասական տենդենցների առկայության ուսմունքն է։ Առարկայի կամ նրա որևէ տենդենցի մասին դատելու համար, պետք է դրանք վերցնել մյուս իրերի կամ տենդենցների հետ ունեցած կապերի ու հարաբերությունների սիստեմում և նրանց առաջացրած կոնկրետ պայմանների կապակցությամբ։ Պատմականորեն կոնկրետ մոտեցումը մարքսիստական դիալեկտիկայի հիմնական պահանջն է։ Միայն ամբողջությամբ առած և տվյալ կոնկրետ իրադրության պայմաններում հարաբերությունների ամբողջ սիստեմը հաշվի առնելովկարելի է առանձնացնել և գնահատել իրի կամ իրադարձության այս կամ այն առանձին կողմը։

Ընկեր Ստալինը հիանալի կերպով հիմնավորում է պատմականության և կոնկրետության սկզբունքը։ Այսպես՝ «դեմոկրատական ռեսպուբլիկա», «ուժեղամյա բանվորական օրենքներն իրենց մեջ պարունակում են տարբեր տենդենցներ, ունեն տարբեր, հաճախ հակասական կողմեր։ «Այսօր մենք դեմոկրատական ռեսպուբլիկա ենք պահանջում։ Կարող ենք արդոք մենք ասել, թե դեմոկրատական ռեսպուբլիկան բոլոր աեսակետներից լավ է կամ բոլոր տեսակետներից վատ։ Ո՛չ, չենք կարող . . .

Դուրս է գալիս, որ միևնույն դեմոկրատական ռեսպուբլիկան միաժամանակ և՛ «լավ» է և՛ «վատ» և՛—«այո» և՛ «ոչ»։

Նույնը կարելի է ասել ուժեղամյա բանվորական օրվա մասին, որը միաժամանակ և՛ «լավ» է, որքան որ նա ուժեղացնում է պրոլետարիատին, և՛ «վատ» որքան որ նա ամրացնում է վարձու աշխատանքի սիստեմը» (344—345)։ Ո՞ր կողմը կամ տենդենցը պետք է առաջ քաշվի, պաշտպանվի կամ մերժվի—դա կախված է կոնկրետ պատմական հանգամանքների ամբողջությունից։ Լենինը բազմիցս ընդգծել է, որ պետք է հաշվի առնել առարկայի բոլոր կողմերը և չմոռանալ հիմնական պատմական կապը։ «Որևէ սոցիալական հարց վերլուծելու ժամանակ մարքսիստական թեորիայի անպայման պահանջը այն որոշակի պատմական շրջանակների մեջ դնելն է» (հատոր 27-րդ. էջ 431)։ Այս՝ միակ դիտական և ժիակ հուսալի մեթոդն է։

Ընկեր Ստալինի բոլոր երկերը երևույթների կոնկրետ վերլուծության օրինակների մի շղթա են կազմում։ Վերցնենք ազգային հարցի դիալեկտիկան և այս կապակցությամբ ընկեր Ստալինի բանավեճը «Սաքարթվելո» թերթի բուրժուական նացիոնալիստների հետ. և մեր առաջ կծավալվի յուրաքանչյուր ձևի, շարժման, պահանջի ու լոզունգի չափազանց բարդ և հակասական բնույթը։ «Ամեն ինչ փոփոխվում է... Փոփոխվում է հասարակական կյանքը և նրա հետ միասին փոփոխվում է նաև «ազգային հարցը»։ Զանազան ժամանակներում զանազան դասակարգեր են պայքարի ասպարեզ դուրս գալիս, -և յուրաքանչյուր դասակարգ իր ձևով է հասկանում «ազգային հարցը»։ Հետևաբար «ազգային հարցը» տարբեր ժամանակներում տարբեր շահերի և ծառայում, տարբեր երանգներ է ընդունում. Նայած թե որ դասակարգը և երբ է այն առաջադրում» (36)։ Այս պատճառով սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան ծրագրի զանազան հոդվածներն ու պահանջները օրգանապես փոխադարձաբար պայմանավորված են այնպես, որ յուրաքանչյուր հոդված կարելի է հասկանալ միայն մյուս հոդվածների կապակցությամբ և ամբողջ ծրագրի ընդհանուր կապակցությամբ։ Եթե դրանք պոկենք և քննարկենք մեկուսացված. ամբողջից և կոնկրետ պատ-

ժական իրադրությունից առանձնացված, կստացվի անհեթեթություն։ Հենց այդպես էին վարվում մարքսիզմի հակառակորդները։ Նրանք պոկում էին մարքսիստական ծրագրի առանձին կետերը, խախտում էին մարքսիստական հայացքների ամբողջական սիստեմի տրամաբանական ներդաշնակությունը և այնուհետև նրա մեջ հեշտությամբ հայտաբերում էին «հակասություններ», «անտրամաբանություն» և այլն։ Սոցիալ-դեմոկրատական ծրագրի որոշ կետերը, ասում էին նրանք, ազգերին առաջարկում են մարզային ավտոնոմիա, իսկ նույն ծրագրի այլ հոդվածներ իրավունք են վերապահում ազգերին իրենց վիճակը կարգավորել սեփական հայեցողությամբ։

Ընկեր Ստալինը համոզիչ, պարզ ու պատկերավոր կերպով բացահայտեց մարքսիստական ծրագրի բուրժուական քննադատների դատողությունների ամբողջ անտրամաբանությունը և անհեթեթությունը։ Դիմելով մարքսիզմի քննադատությանը, նրանք պատերազմ էին հայտարարել տրամաբանությանը։ Նրանք նման են այն տխրահռչակ անատոմին, որը իրեն հայտարարել էր անատոմիայի հայտնի գիտակ, բայց երբ նրան հրամցրին քանդված կմախքի բոլոր մասերը, նա դես ու դեն էր ընկնում և ոչ մի կերպ չէր կարողանում կմախքի մասերը դնել իրենց տեղը և վերականգնել ամբողջը։ Այնուհետև նա գայրացավ, այդ մասերը դեն նետեց և ասաց, որ դրանք կմախքի իսկական մասերը չեն։ Այդ անատոմին նման է «Սաքարթավելո» թերթը. «նրա խելքին փչել է քննարկել մեր պարտիայի ծրագիրը, սակայն բանից դուրս է գալիս, չի իմացել, թե ինչ է ներկայացնում իրենից մեր ծրագիրը և ինչպես պետք է վերլուծել այն, չի հասկացել ինչպիսի կապ գոյություն ունի այդ ծրագրի առանձին հոդվածների միջև և ինչ է ներկայացնում յուրաքանչյուր հոդված առանձին վերցրած...» (53–54)։ Եվ ընկեր Ստալինը մարքսիզմի հակառակորդներին քաղաքական դաս է տալիս։ Մեր ծրագրի որոշ հոդվածներ, — սովորեցնում է նա, — նկատի ունեն քաղաքական ցենտրալիզմը, որպես պատմականորեն պրոգրեսիվ ձև և կրում են ընդհանուր բնույթ, իսկ որոշ հոդվածներ էլ նկատի ունեն պատմական հատուկ պայմաններ և նախատեսում են ազգային հարցի լուծման հնարավոր՝ կոնկրետ դեպքեր, առանց կանխորոշելու բոլոր ձևերը, որովհետև շատ բան կախված է կոնկրետ պայմաններից։ Եվ ընկեր Ստալինը եզրափակում է. «Այդպես է պարտավոր վարվել ամեն մի շրջահայաց, հեռատես պարտիա» (56)։ Սա ճկուն, կոնկրետ հարցադրման մի հիանալի օրինակ էր մարքսիստների ծրագրում։

Զարգացնելով ճշմարտության կոնկրետության, պատմականության թեզը, ընկեր Ստալինն իր միտքը հաստատում է Ռուսաստանում դիալեկտիկների և մետաֆիզիկների պայքարի պատմությունից վերցված փաստերով։ Մետաֆիզիկները բռնել էին դիալեկտիկների (Չերնիշևսկու և ուրիշների) օձիքից և պահանջում էին «վճռական պատասխան» հետևյալ հարցերին՝ անձրևը օգտակա՞ր է, թե՞ վնասակար, պատերազմը բարի՞ք է, թե չարիք։ Ռուս դիալեկտիկները պատասխանում էին, որ հարցը դրված է վերացական ձևով, իսկ հարկավոր է կոնկրետ դնել, այսինքն՝ ի՞նչ պայմաններում, երբ, ում համար, ո՞ր պատերազմը։ Ճիշտ այդպես էլ մարքսիզմի հակառակորդները պահանջում էին վճռական պատասխան այն հարցին, թե պրոլետարիատի համար ազգային ավտոնոմիան, կոոպերատիվները և այլն օգտակար են, թե վնասակար։ Այդպիսի հարցադրումը վերացական է և ան-

բովանդակ, հարցը պետք է դրվի կոնկրետ, այսինքն՝ պատմական որոշ կապակցության մեջ. «ամեն ինչ կախված է տեղից և ժամանակից», պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցությունից, նրա կազմակերպվածությունից, ազգային շարժման բովանդակությունից և շատ ուրիշ պայմաններից։

Ազգային հարցի դիալեկտիկականությունը դրսևորվում է նաև նրա զարգացման, նրա ձևի և բովանդակության հակասության մեջ։ Ազգային հարցի դասակարգային բովանդակությունը նրա զարգացման տարբեր աստիճաններում տարբեր է. ազգային շարժման հին ձևը հաճախ պարունակում է դասակարգային նոր բովանդակություն։ Դա հանգեցնում է ձևի վերակառուցմանը և բովանդակության հետագա զարգացմանը։ Օրինակ՝ վրացական ազգային շարժման մեջ զանազան էտապներում թաքնված է եղել ազնվականական բովանդակություն, բուրժուական բովանդակություն, դեմոկրատական և պրոլետարական բովանդակություն։

Առհասարակ ձևի և բովանդակության դիալեկտիկայի հարցը բնության և հասարակական երևույթների մեջ չափազանց լայն մի կատեգորիա է։ Այդ պրոբլեմի թեորիական անալիզը ընկեր Ստալինը տալիս է բազմակողմանի։ Այսպես՝ մարդկանց կյանքի նյութական պայմանները կազմում են հասարակական կյանքի բովանդակությունը, իսկ քաղաքական-իրավական նորմանները, պետությունը ինչպես նաև հասարակական մտքի զանազան հոսանքները, այսինքն գաղափարախոսությունները հանդիսանում են ձևը, որը որոշվում է բովանդակությամբ, կապված է նրա հետ։ Բայց այդ կապը մեխանիկական չէ, այլ դիալեկտիկական. նրանց միջև գոյություն ունի միասնություն, փոխադարձ ներգործություն և հակասություն։ Ձևը երբեմն համապատասխանում է բովանդակությանը, ներդաշնակում է նրա հետ, նպաստում է նրա զարգացմանը։ Բայց հաճախ բովանդակության զարգացման հետևանքով ձևը նրանից ետ է մնում, հակասում է նրան. նրանց միջև առաջանում է կոնֆլիկտ։ Կոնստիտուցիաները, իրավական նորմանները, պետության կառուցվածքը մեքենայորեն չեն վերակառուցվում նյութական բովանդակության զարգացման ասպարեզում յուրաքանչյուր նոր քայլի հետ միասին։ Ճիշտ այդպես էլ մարդկանց գիտակցությունը երբեմն առաջ է անցնում նյութական պայմանների զարգացման ընթացքից, շատ հաճախ էլ ետ է մնում մարդկանց փաստական կեցությունից և միայն երկարատև գործնական պայքարում ու դաստիարակության ընթացքում դժվարությամբ վերակառուցվում է։ Այս իմաստով մենք մեր երկրում պայքար ենք մղում կապիտալիզմի մնացուկների դեմ փաստորեն կոմունիզմ կառուցող մարդկանց գիտակցության մեջ։ Կեցության և մտածողության միջև այդ դիալեկտիկան ընկեր Ստալինը ցուցադրում է պարզորեն և համոզիչ կերպով։ Հիշեցեք կոշկակարի օրինակը. լինելով ինքնուրույն արհեստավոր, կոշկակարը գործարանային արտադրության ճնշման տակ քայքայվում, ընկնում է գործարան։ Փաստորեն իր օբյեկտիվ գոյավիճակով նա դարձել է պրոլետար, բայց նրա հոգեբանությունը որոշ ժամանակ մնացել է մանր բուրժուական և միայն ժամանակի ընթացքում, բանվորների գործնական դասակարգային պայքարին մասնակցելու պրոցեսում նրա գիտակցությունը բարդ ուղիներով վերակառուցվում, դառնում է պրոլետարական գիտակցություն։

Գիտակցությունը հասարակական կյանքում ակտիվ դեր է խաղում։ Բովանդակության և ձևի, կեցության և մտածողության այդ դիալեկտիկան չհասկանալը, հասարակական վերնաշենքերի (քաղաքական և գաղափարախոսական) յուրահատկության և ակտիվության ժխտումը ոչ թե դիալեկտիկական մատերիալիզմ, այլ վուլգար մատերիալիզմ է։ Հենց այդպես էին հասկանում խնդիրը էկոնոմիստները, անարխիստները, մենշևիկները և մարքսիզմի մյուս հակառակորդները։ Ընկեր Ստալինը բացահայտում է անարխիստների ապիտությունը. «Նրանք, բանից դուրս է գալիս, չգիտեն որ գիտության մեջ կան մատերիալիզմի տարբեր տեսակներ, որ նրանց միջև մեծ տարբերություններ կան. կա օրինակ, վուլգար մատերիալիզմ, որը ժխտում է իդեալական կողմի նշանակությունը և նրա ներգործությունը նյութական կողմի վրա, բայց կա նաև այսպես կոչված մոնիստական մատերիալիզմ, Մարքսի մատերիալիստական թեորիան—որը գիտականորեն է քննարկում իդեալական և նյութական կողմերի փոխհարաբերությունը» (364)։

Բանվորական շարժման ամբողջ պրոցեսը ընկեր Ստալինը դիտում է որպես դիալեկտիկական անցումների պրոցես։ Այսպես, տարերային բանվորական շարժումը հակադիր է գիտակցականին, բայց միևնույն ժամանակ տարերային շարժման ծնունդը անհրաժեշտ պայման, աստիճան հանդիսացավ գիտակցական շարժմանը անցնելու համար, իսկ անցումը դեպի գիտակցականությունը և կազմակերպվածությունը իր հերթին նշանակում էր տարերայնության հաղթահարում։

Մեր առջև է կյանքի դիալեկտիկայի չափազանց հետաքրքիր մի պատկեր։ 19-րդ դարի վերջերից Ռուսաստանում սկսվում են ֆաղամական ցույցեր. դա նշանակում էր, որ հասարակական դժգոհությունը պարզ և լռելյայն բողոքից անցնում էր ուղղակի գործողություններին։ Դա պայքարի նոր ձև էր։ Բայց հասարակական այդպիսի լայն շարժման համար, ինչպիսին ցույցն է, հին պահանջները շատ նեղ դուրս եկան։ Ահա ձեզ մի հակասություն. հին բովանդակության հիման վրա ծագել է նոր ձև, որը դուրս գալով հին բովանդակության համար չափազանց լայն, իր հերթին հաղթահարել է նրան և առաջադրել է նոր բովանդակություն։ Եվ ահա թե ինչպես. քանի որ մարդկային մասսան փողոցում դեմ հանդիման է կանգնել ցարիզմին, նշանակում է նա վնաս է. լուրջ գործողությունների դիմել, ուստի և պահանջները էլ պետք է լինեն լուրջ։ Դուրս է գալիս, որ քաղաքական պայքարը ունի իր օբեկտիվ լոգիկան և այդ լոգիկան դիալեկտիկական է։ Բոլշևիկները հաշվի էին առնում իրերի այդ օբիկտիվ լոգիկան, ձևակերպելով համապատասխան պրակտիկ լոզունգներ։ Հիմնական լոզունգն էր ցարիզմի տապալումը։ Բայց նման լոզունգի իրագործումը հնարավոր է միայն այն պայմանով, եթե ժողովրդի պայքարը գլխավորում է լուրջ հասարակական ուժ։ Այդպիսի ուժ չէր կարող լինել ոչ մանր բուրժուազիան (էլ չխոսելով բուրժուազիայի մասին), ոչ էլ գյուղացիությունը։ Այդպիսի ուժ կարող էր լինել միայն պրոլետարիատը։ Պրոլետարիատը որպես ռևոլուցիոն վերափոխությունների հեգեմոն և վճռական ուժ,—ահա սա էր բոլշևիկների, Լենինի և Ստալինի արած հետևությունը։ Իսկ պրոլետարիատի առաջավոր ջոկատը, քաղաքական բարձրագույն կազմակերպությունը մարքսիստական պարտիան է. հենց նա էլ պետք է կազմակերպեր, միավորեր բանվորների և ամբողջ ժողովրդի

ֆանքերն ու պայքարը և ուղղեր հիմնական նպատակի իրագործմանը։ Ահա թե ինչպես է վերլուծել իրադարձությունների ընթացքը ընկեր Ստալինը դեռ 1901 թվին և ինչպիսի լոզունգների ու հետևություններ է հանգել։ Միայն հենց այս օրինակը բավական է իրադարձությունների լենինյան-ստալինյան դիալեկտիկական վերլուծության ամբողջ ուժն ու խորությունը հասկանալու համար։

Ցույցերի դիալեկտիկան դրանով չի սպառվում։ Նրանք շարժման մեջ են ներգրավում բնակչության նոր խմբեր, միանգամից ընդլայնում են քաղաքական ագիտացիայի շրջանակները, ներգրավում շատ «հետաքրքրվողներից»։ Բայց այսօրվա «հետաքրքրվողը» վաղը (ժանդարմական մտրակների մի քանի հարվածներից հետո) կդառնա գիտակից ցուցարար։ Ցույցերը հաճախ պարտություն են կրում, բայց յուրաքանչյուր պարտությունից հետո մասսաները համախմբվում են նոր ուժով, ռևոլուցիոն դասակարգը և նրա պարտիան տանում են քաղաքական ու բարոյական նոր հաղթանակ։ Ահա ձեզ նաև հաղթանակների ու պարտությունների դիալեկտիկան։ Ընկեր Ստալինը հենց այդ դիալեկտիկան է արտահայտում հետևյալ ֆորմուլայով. «Հանգստացման զենքից նրանք (մտրակները—Հ. Ա.) դառնում են զարթոնքի զենք։ Ընկեր Ստալինն իր միտքը արտահայտում է այս ձևով. ցարիզմը դեռ շատ անգամներ կարող է հաղթանակ տանել ցույցերի նկատմամբ. «բայց դա կլինի «պյուրոսյան հաղթանակ»։ Եվ մի քանի այդպիսի հաղթանակ և աբսոլուտիզմի պարտությունը անխուսափելի է։ Այսօրվա հաղթանակով նա իր համար նախապատրաստում է պարտություն»։

Այս բոլորից ակներև է, որ երևույթների, պատմական բոլոր իրադարձությունների զարգացումը տեղի է ունենում հակասություններով, հակադրությունների պայքարի միջոցով։ Ամեն մի նոր կարգ՝ հաստատվում է ոչ թե ինքնահոսի միջոցով, այլ հնի դեմ մղված դաժան պայքարի միջոցով և նրա հաղթահարման հիման վրա, հին կյանքի արմատական վերափոխումների միջոցով։ Իսկ քանի որ այդպիսի օրինաչափություն ընդունվել է, քանի որ այդպիսի ճշմարտություն հաստատվել է, ապա այն պետք է նախապատրաստել ոչ միայն գաղափարապես, այլև գործնականորեն, կազմակերպչորեն, մասսաների, ռևոլուցիոն դասակարգերի ու պարտիայի ուժերն ու եռանդը մոբիլիզացնելու միջոցով։

Ահա Լենինի և Ստալինի երկերի վերլուծությունից բխող գլխավոր հետևությունը։

Լենինի և Ստալինի ուսմունքի վեհությունն այն է, որ, ընդհանրացնելով աշխատավորների պայքարը և համաշխարհային գիտական մտքի նվաճումները, բացատրելով անցյալի, ներկայի և ապագայի կապակցությունը, մեզ տալիս է պարզ հեռանկար, ներշնչում է հավատ և վստահություն, մեր մեծ ստեղծարար աշխատանքի համար ստեղծում է ամուր գիտական բազա։ Այսպես ենք մենք հասկանում ընկեր Ստալինի հետևյալ խոսքերի իմաստը. «Մեր դիրքի վրա կանգնած մարդը պետք է խոսի հաստատուն ձայնով։ Այդ տեսակետից Լենինը լեռնային արծիվ է»։